Պատասխաններ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի – 2025-2026 ուս. տարի

11-12 – րդ դասարան

1. ա-ճիշտ; բ-ճիշտ; գ-ճիշտ; դ-ճիշտ; ե-սխալ; զ-սխալ; է-ճիշտ; ը-սխալ (յուր.՝ **0.25միավոր**)

2. ա. Երկու կողմից խզվածք ունեցող երկրակեղևի իջած տեղամաս (**0.5միավոր**):

բ. Ճանապարհի որոշակի հատվածով միավոր ժամանակում տեղափոխված բեռների ընդհանուր զանգված կամ անցած տրանսպորտային միջոցների քանակ (**0.5միավոր**): Անցած տրանսպորտային միջոցների քանակը չնշելու դեպքում միավոր չի նվազեցվում:

3. Մթնեցում կամ համամոլորակային մթնեցում (**1միավոր**): Ընդունել նաև միջազգային համարժեքը՝ dimming: Սմոգ պատասխանի համար՝ **0.25միավոր**

4. ա Անդրազգային կամ վերազգային կորպորացիա (**1միավոր**) **բ**. Ֆյոն (**1միավոր**)

5. ա. 1) Տեղումների և գոլորշունակության տարբերությունը 50մմ է, հետևաբար տարեկան տվյալ տարածքում գոլորշացումից հետո տեղումների տեսքով ձևավորվում է 0.00005 x 60000 = 3կմ^3 ջուր (**0.25միավոր**):

2) Գետերի միջոցով ձևավորվում է 2 – 1.5 = 0.5կմ^3 ջուր (**0.25միավոր**)

3) Հանրագումարում ձևավորվում է 3 + 0.5 = 3.5կմ^3 ջրային ռեսուրս (**0.25միավոր**)

4) 3.5 x 100%/8 = 43.75% (**0.25միավոր**)

Եթե վերջին քայլում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները և գործողությունը ճիշտ են՝ **տրվում է 0.75միավոր**: Եթե պատասխանը ևս ճիշտ է՝ **1միավոր**:

բ. ա) մուսսոնային (**0.5միավոր**): բ) հարավային (**0.5միավոր**):

6. Գծագիրը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք: Նվազեցնել 0.5միավոր հետևյալ թերություններից յուրաքանչյուրի համար՝ ռելիեֆը վերականգնված է փոքր թերություններով, որոնք սակայն ընդհանուր պատկերը չեն աղավաղում; գունավորումը անընթեռնելի է կամ բացակայում է; պայմանական նշանների համակարգը ներկայացված չէ կամ չի համապատասխանում պատկերին; հորիզոնականները ներկայացված չեն կամ էական սխալներով են;

ա. Արևելյան կամ հարավ-արևելյան (որևէ մեկը նշելու դեպքում՝ **0.5 միավոր**);

բ. 100մ (**0.5 միավոր**)

Տեղանքի բարձրաչափական քարտեզ



Պայմանական նշաններ

Հորիզոնականներ

Բարձրությունը ծովի մակարդակից (մ)

- 371.1 - 2,000
- 2,001 - 2,100
- 2,101 - 2,200
- 2,201 - 2,300
- 2,301 - 2,400
- 2,401 - 2,500
- 2,501 - 2,600

7. Ողջի, Արփա, Դեբեդ, Հրազդան
Իր դիրքում ճիշտ նշված յուրաքանչյուր պատասխանի համար տրվում է **0.25միավոր**

8. ա. Տարբերությունների գլխավոր պատճառը ազդեցության գոտին է և մասնավորապես տուժած գոտու տնտեսական զարգացվածությունը: Ակնհայտ է, որ թույլ զարգացած երկրներում վնասը շատ ավելի փոքր տնտեսական արժեք է ունենալու, քան զարգացած երկրում: Տոհոկուն վերաբերում է Ճապոնիային, որը տնտեսապես աշխարհի ամենազարգացած երկրներից է, ի տարբերություն մյուս երկու աղետներից տուժած երկրների: Այլ՝ երկրորդական պատճառի ներկայացման կամ բացատրության թերությունների դեպքում՝ առավելագույնը 0.5միավոր: Տվյալ պարագայում երեք աղետներն էլ նույն ծագման են և Տոհոկուի երկրաշարժը նաև ուղեկցվել է աղետալի ցունամիով: Հետևաբար պատճառաբանությունները, որոնք շեշտադրում են աղետների տարբեր բնույթը չեն ընդունվի:

բ. Որպես գլխավոր պատճառներ կարելի է բերել աճող քաղաքական անկայունությունը, որի պայմաններում հաճախ մատակարարման շղթաները խաթարվում են և երկրները ձգտում են ավելի ինքնաբավ տնտեսություններ ունենալ ճգնաժամերից խուսափելու համար (**0.5միավոր**): Զարգացած և զարգացող երկրների միջև տնտեսական անդունդը խորանում է և զարգացող երկրներում արտադրությունների ինքնարժեքը զգալի ցածր է լինում, ինչի արդյունքում զարգացած երկրների տնտեսվարողները մրցակցությանը չեն դիմանում: Հաճախ սա հանգեցնում է նաև առևտրային պատերազմների և երկրները խոչընդոտների միջոցով փորձում են սեփական արտադրողներին պաշտպանել (**0.5միավոր**):

Երկրորդային պատճառներ կամ մասնավոր դեպքեր ներկայացնելու դեպքում առավելագույնը **0.5միավոր**:

9. ա. Արևելյան **(0.5միավոր)**

բ. Կառուցապատումը (**0.5միավոր**): Կլիմայի փոփոխությունը պատասխանի համար՝ **0.25միավոր**

գ. Քաղաքային ջերմային կղզյակը (**0.5 միավոր**):

դ. Գիշերը (**0.5 միավոր**):

10. ա. Մեծ հեռավորության պատճառով ԱՄՆ այցելող զբոսաշրջիկները որպես օրենք ավելի երկար են մնում այնտեղ և արդյունքում ավելի շատ ծախսում (**0.5միավոր**); Կարևոր է նաև երկրի մեծությունն ու զբոսաշրջային գրավչությունների ցրվածությունը, որոնց այցելելու համար հաճախ ներքին ինքնաթիռային թռիչքներից են օգտվում, կամ մեծ հեռավորությունների վրա ճանապարհորդում, ինչը ևս էական գումարներ է ապահովում (**0.5միավոր**): Այլ պատճառները (օր.՝ երկրի բարձր կենսամակարդակը) երկրորդական են և զգալի առավելություն ապահովել չեն կարող, հետևաբար չեն գնահատվում:

բ. Օրգանական գյուղատնտեսությունը առաջնահերթություն է տալիս բնական նյութերի կիրառմանը, ինչի արդյունքում բերքատվությունը բարձր չէ (**0.5միավոր**): Միևնույն ժամանակ գինը բարձր է, ինչը օրգանական եղանակով ստացված մթերքը դարձնում է պակաս հասանելի (**0.5միավոր**): Եթե նշվում է հողային ռեսուրսների սահմանափակությունը՝ դա ևս հաշվել որպես ճիշտ պատասխան՝ (**0.5միավոր**):

11. Ա-3; Բ-4; Գ-2; Դ-1 (**յուր. 0.5միավոր**)